ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ռ 09.06.01.42
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 28 «փետրվար» 2018

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Այբ» կրթական հիմնադրամը /այսուհետ՝ Կազմակերպություն/՝ ի դեմս գործադիր տնօրեն՝ Ս. Կոշեցյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), 09.06.01.«42. Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում» ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր), ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել որոշմամբ հաստատված 619693500 (վեց հարյուր տասնինը միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառի լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհապույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար փոխանցելու՝ միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը չի պահպանում N 1 հավելվածով սահմանված պահանջները կամ դրանում նախատեսված միջոցառումների իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է N 1 հավելվածով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (եթե, բացի վերջնական ժամկետից, կան նաև կոնկրետ միջոցառումների իրականացման ժամկետներ),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

2.1.4. պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.1.5. պայմանագրի 2.4.4 կետում նշված ժամկետում կազմակերպության կողմից պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված բովանդակային հաշվետվությունները, ինչպես նաև N 3 հավելվածով նախատեսված որոշակի ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում ժամանակավորապես դադարեցնել գումարի փրամադրումը,

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. անհրաժեշտության դեպքում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել N 1 հավելվածով նախատեսված միջոցառումների (ինչպես համալիր այնպես էլ առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի և N 1 հավելվածի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, նախարարությունը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից փրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել N 1 հավելվածով և (կամ) պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով փրված ցուցումները.

2.4.4 մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներկայացնել բովանդակային հաշվետվություններ համաձայն N 1 հավելվածի և որոշ ֆինանասական ցուցանիշների վերաբերյալ եռամսյակային տեղեկատվություն՝ համաձայն N 3 հավելվածի.

2.4.5 մինչև հաջորդ տարվա փետրվարի 15-ը ներկայացնել իրականացված միջոցառումների վերաբերյալ փարեվերջյան ֆինանսական հաշվետվությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 2 հավելվածի, ինչպես նաև որոշ ֆինանսական ցուցանիչների վերաբերյալ չորորդ եռամսյակի տեղեկատվություն՝ համաձայն N 3 հավելվածի.

2.4.5. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել N 1 հավելվածով նախատեսված միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝

նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներև կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր՝ չխոչընդոտելով կազմակերպության ընթացիկ գործունեությանը:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը կտրամադրի որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրով և N 1 հավելվածով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է վերադարձնել նախարարությանը չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի չափով: Նախարարության պահանջի առկայության դեպքում կազմակերպությունը նաև պետք է վճարի տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով, եթե միջոցառումը չիրականացումը անմիջականորեն պայմանավորված է կազմակերպության դիտավորյալ կամ սխալ գործունեությամբ: Ընդ որում, տուգանքի պահանջի դեպքում և դրա վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.2. Պայմանագրի 5.1. կետով նախատեսված պատասխանատվությունն ի հայտ է գալիս պայմանագրի N 1 և N 2 հավելվածների անմիջական խախտման արդյունքում:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և

որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և/կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 3 շենք
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
ՀՀ 900011000842
ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի ղեկավար՝

_____ Ն. Հարությունյան

Կազմակերպություն

«Այբ» կրթական հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0009, Կորյունի փ. 19 ա, 9-րդ հարկ
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930055663050100
ՀՎՀՀ 01558429
Գործադիր տնօրեն՝

_____ Ս. Կոշեցյան

Հավելված
28 մարտի 2018 թ. -ին
կնքված
պայմանագրի, Հավելված N1,

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

Իրականացվելիք միջոցառման						
N	**Անվանում**	**Համառոտ բովանդակություն**	**Կատարման ենթակա գործառույթների նկարագիր**	**Ակնկալվող արդյունքներ և դրանց գնահատման չափանիշներ**	**Վերջնաժամկետ**	**Պահանջվող գումար**
1	Արարատյան բակալավրիատ ծրագրի միջազգայնացում և հանրային հաղորդակցության կազմակերպում, առարկայական ծրագրերի և կրթական նյութերի լրամշակում, քննությունների մշակում և կազմակերպում միջազգային գործընկերոջ	Արարատյան բակալավրիատի որակավորումների ճանաչման գործընթացի շարունակական իրականացում, Արարատյան բակալավրիատի քննությունների կազմման և անցկացման գործընթացի կազմակերպում, առարկայական ծրագրերի և	Արարատյան բակալավրիատի որակավորումների տարածման և ճանաչման ուղղությամբ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ընտրված միջազգային կրթական կոնֆերանսների մասնակցություն, առաջատար կրթական հաստատություն-	Արարատյան բակալավրիատի ներկայացում միջազգային կրթական միջոցառումներին և կոնֆերանսներին, միջազգային կրթական կենտրոններին, միջազգային առաջատար համալսարաններին, Արարատյան բակալավրիատի վերաբերյալ հանրային տեղեկատվության տարածում	31.12.2018	**300,609,182**

	խորհրդատվությամբ, Արարատյան բակալավրիատի՝ հանրակրթական ավագ դպրոցի բաղադրիչ ունեցող ուսումնական հաստատություններում ներդրման (ոչ-ուսուցչական) աշխատանքների իրականացում	կրթական նյութերի լրամշակում, ավագ դպրոցի բաղադրիչ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն-ներում Արարատյան բակալավրիատի ներդրման աշխատանքների կազմակերպում	ներում Արարատյան բակալավրիատի ներկայացում Արարատյան բակալավրիատի ավարտական և բուհական ընդունելության, վերապատրաստման նպատակով ուսուցիչների ընտրության քննությունների կազմում, քննաթերթիկների վավերացում միջազգային գործընկերոջ հետ, քննություն կազմող անձնակազմի հավաքագրում և վերապատրաստում, քննությունների կազմակերպում Արարատյան բակալավրիատի առարկայական ծրագրերի լրամշակում ,	Արարատյան բակալավրիատի ավարտական և բուհական ընդունելության, ուսուցիչների ընտրության քննությունների կազմում, քննություն կազմող անձնակազմի հավաքագրում և վերապատրաստում, քննությունների կազմակերպում Միջազգային գործընկերոջ կողմից Արարատյան բակալավրիատի քննական հավաստագրերի տրամադրում, քննական գործընթացներում խորհրդատվության տրամադրում Արարատյան բակալավրիատի լրամշակված առարկայական ծրագրեր, կրթական նյութեր Ներդրման ենթակա դպրոցների հետ համապատասխան աշխատանքների		

			կրթական նյութերի մշակում Արարատյան բակալավրիատի՝ դպրոցներում ներդրման ոչ-ուսուցչական փուլի աշխատանքների իրականացում Համապատասխան աշխատակազմի ներգրավում և ընթացիկ աշխատանքների համակարգում Արարատյան բակալավրիատի քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա առարկաներից 2019թ. ավարտական քննությունների մշակման աշխատանքների առաջին փուլի իրականացում	կազմակերպում, ղեկավար կազմի վերապատրաստում միջազգային գործընկերոջ հետ համատեղ, մասնակից տնօրեններին և փոխտնօրեններին, վերապատրաստումներին մասնակցության նպատակով և ըստ կարիքի, տրանսպորտային, սնունդի և կացության ծախսերի հոգում/փոխհատուցում «Այբ» կրթական հիմնադրամի կողմից սահմանվող սահմանաչափերով Արարատյան բակալավրիատի քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, մաթեմատիկա առարկաներից 2019թ. ավարտական քննությունների նախնական քննական հարցերի առկայություն Ծրագրի աշխատակազմի համալրում		

2	Վերապատրաստողների և ուսուցիչների վերապատրաստում, ուսուցիչների վերապատրաստման ծրագրի մշտադիտարկում միջազգային գործընկերոջ կողմից, Արարատյան բակալավրիատի՝ հանրակրթական ավագ դպրոցի բաղադրիչ ունեցող ուսումնական հաստատություններում ներդրման ուսուցչական փուլի իրականացում	Ուսուցիչների վերապատրաստման ծրագրի օժանդակ նյութերի շարունակական ստեղծում, վերապատրաստման ծրագրի շարունակական լրամշակում, Արարատյան բակալավրիատի՝ դպրոցներում ներդրման աշխատանքների ուսուցչական փուլի իրականացում, միջազգային գործընկերոջ կողմից ուսուցիչների վերապատրաստման ծրագրի մշտադիտարկում	Ուսուցիչների վերապատրաստման ծրագրի օժանդակ կրթական նյութերի ստեղծում Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի հետ համատեղ՝ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի լրամշակում, ծրագրի մշտադիտարկում Արարատյան բակալավրիատի՝ դպրոցներում ներդրման աշխատանքների ուսուցչական փուլի (ընտրված ուսուցիչների մասնագիտական զարգացում) կազմակերպում	Թարգմանված հայալեզու ուսուցչական ակադեմիական հոդվածներ, վերջիններիս ներդնում ուսուցիչների վերապատրաստման ծրագրում Ուսուցիչների վերապատրաստման լրամշակված ծրագրի գործարկում, Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի կողմից մշտադիտարկման զեկույցի տրամադրում Արարատյան բակալավրիատի՝ դպրոցներում ներդրման աշխատանքների ուսուցչական փուլի (ընտրված ուսուցիչների մասնագիտական զարգացում) կազմակերպում՝ ուսուցիչների վերապատրաստումներ, մասնակից ուսուցիչների դասալսումներ ԿԳԱԾ-ի կողմից, մասնակից	31.12.2018	**110,960 ,369**

			Համապատասխան աշխատակազմի ներգրավում և ընթացիկ աշխատանքների համակարգում	ուսուցիչների հետազոտական աշխատանքների և մասնակցության գնահատում ԿԳԱԾ-ի կողմից, մասնակից ուսուցիչներին, վերապատրաստումների մասնակցության նպատակով և ըստ կարիքի, տրանսպորտային, սնունդի և կացության ծախսերի հոգում/փոխհատուցում «Այբ» կրթական հիմնադրամի կողմից սահմանվող սահմանաչափերով Միջազգային գործընկերոջ փորձագետների այցեր, միջազգային գործընկերոջ կողմից զեկույցի ներկայացում Ծրագրի աշխատակազմի համալրում		
3	ԿԳԱԾ ծրագրի համակարգում, ԿԳԱԾ անձնակազմի համալրում	ԿԳԱԾ ծրագրի համակարգում	ԿԳԱԾ ընթացիկ աշխատանքների, ռազմավարական զարգացման, շահառուների հետ	Համակարգման աշխատանքների իրականացում Անձնակազմի համալրում	31.12.2018	**104,841 ,699**

			հարաբերություններ ի համակարգում ԿԳԱԾ անձնակազմի համալրում			
ԱԱՀ- **103,282,250**						
ԸՆԴԱՄԵՆԸ **619,693,500** դրամ						

Պատվիրատու
ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ք. Երևան, Կառավարական 3 շենք
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն
Հ/Հ 900011000842
ՀՎՀՀ 02512868
Նախարարության աշխատակազմի ղեկավար

Ն. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կատարող
«Այբ» կրթական հիմնադրամ
ՀՀ Ք. Երևան 0009, Կորյունի փ. 19ա, 9-րդ հարկ
Կոնվերսբանկ ՓԲԸ,
Հ/Հ 19300556630501 00
ՀՎՀՀ 01558429
Գործադիր տնօրեն՝ Ս. Կոշեցյան

(ստորագրություն)

Կ.Տ

GKG